IDBank

# 2022

## ՏԱՐԵԿԱՆ
## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# Բովանդակություն


## 01 Բանկի մասին համառոտ

IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկի ձեռքբերումները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

## 02 Ռազմավարական հաշվետվություն

Խորհրդի նախագահի ուղերձ 10

Վարչության նախագահի ուղերձ 11

ՀՀ տնտեսությունը 12

Մեր ռազմավարական արդյունքները 15

Ֆինանսական արդյունքներ 19

Մեր անձնակազմը 22

## 03 Կորպորատիվ կառավարում

Մեր բաժնետերերը և խորհուրդը 27

Ռիսկերի կառավարում 29

## 04 Ֆինանսական հաշվետվություններ 32

## 05 Պատասխանատու անձանց հայտարարություն 36

# 1 Բանկի մասին համառոտ


IDBank-ը մեկ հայացքով 04

Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները 06

Բանկի ձեռքբերումները 07

Բանկը որպես հաշվետու թողարկող 08

# IDBank-ը մեկ հայացքով

**1990**

Բանկի հիմնադրում

**2007**

Moody’s ընկերության կողմից առաջին անգամ միջազգային վարկանիշի ստացում

**2016**

Բանկի կողմից առաջին անգամ պարտատոմսեր ի թողարկում և տեղաբաշխում

**2018**

«Անելիք Բանկ» ՓԲԸ-ի վերանվանում «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի

Idram - IDBank համատեղ թվային հարթակի գործարկում

**2020**

Rocket Line հեղափոխական ապառիկի գործարկում

Թվային հարթակից օգտվող հաճախորդների թվաքանակի մոտ 400% տարեկան աճ

**2021**

Ավելին քան 400,000 հաճախորդ

70% ակտիվ հաճախորդներ թվային հարթակում

**2022**

Ավելին քան 330,000 ակտիվ քարտ

1.000.000-ից ավել Rocket line թվային ապառիկի գործարք

“

**IDBank-ը** Հայաստանի նորարար զարգացող բանկերից մեկն է և արդեն 33-ամյա գործունեության փորձ ունի բանկային համակարգում: Բանկը մշտապես ընդլայնում և բարելավում է հաճախորդներին մատուցվող ծառայությունները, թվային հարթակում մատուցվող ծառությունների շրջանակը՝ հաճախորդներին առաջարկելով հետաքրքիր լուծումներ և առավելագույն հարմարավետություն: Հավատարիմ մնալով իր առաքելությանը և ռազմավարական առաջնահերթություններին՝ Բանկը հստակ քայլերով առաջ է շարժվում՝ կերտելով իր հաջողության ուղին:

# IDBank-ը մեկ հայացքով

**2022 թվականի արդյունքներով**

- Ակտիվների **57%** տարեկան աճ
- Ակտիվների աճի տեմպով շուկայի առաջատար

- Ավանդների, ընթացիկ հաշիվների **104% աճ**
- Կապիտալի համարժեքության բարձր մակարդակ

| | |
|---|---|
| Ակտիվներ | **309 մլրդ** |
| Պարտավորություններ | **250 մլրդ** |
| Ավանդներ, Հաշիվեր | **188 մլրդ** |
| Կապիտալ | **59 մլրդ** |
| Զուտ շահույթ | **13,5 մլրդ** |
| ROE | **25.9 %** |
| CIR | **38.8 %** |

Հայաստանում անկանխիկ վճարումների ավելին քան **35%-ի** ապահովում

- Ակտիվ հաճախորդների մոտ **40% աճ**
- Թվային հարթակում ակտիվ հաճախորդների **55% աճ**

- Թողարկված քարտերի քանակի մոտ **30% աճ**
- Քարտերով վճարումների մոտ **115% աճ**

| | |
|---|---|
| Հաճախորդներ | **515 հազ.** |
| Քարտեր | **333 հազ.** |
| Մասնաճյուղեր | **13** |
| Աշխատակիցներ | **750** |
| Թվային հարթակում գրանցված ակտիվ հաճախորդներ | **78.1%** |
| “Գնիր հիմա, վճարիր հետո” 0%-ով POS տերմինալներ | **5100** |

# Բանկի առաքելությունը, տեսլականը, արժեքները

**Բանկի առաքելությունը**

Լինել առաջին ընտրության բանկ մեր հաճախորդների համար՝ որպես Հայաստանի լավագույն նորարար բանկ:

**Բանկի տեսլականը**

Դառնալ առաջատար թվային բանկ՝ ընդլայնելով մեր նորարարական, հաճախորդամետ գործունեությունը:

**Բանկի արժեքները**

***Մենք նորարար ենք*** – Մեր առաջնային նպատակներից է հաճախորդներին որակյալ, արագ և առանց սահմանների բանկային ծառայությունների մատուցումը՝ բաց և նորարարական թվային հարթակի միջոցով:

***Մենք թափանցիկ ենք*** – Մենք շարունակական ջանքեր ենք գործադրում, որպեսզի առավել թափանցիկ լինենք մեր հաճախորդների, ներդրողների, գործընկերների և բաժնետերերի հետ հարաբերություններում:

***Մենք վստահելի ենք*** – Մենք կարևորում ենք մեր շահառուների տվյալների անվտանգ պահպանությունը՝ մեծ ռեսուրսներ ներդնելով դրանք կիբերհարձակումներից և այլ սպառնալիքներից պաշտպանելու համար:

***Մենք հավատարիմ ենք*** – Մենք մեր հաճախորդների կողքին կլինենք կյանքի և՛ լավ, և՛ վատ պահերին՝ ստեղծելով հաճախորդամետ էկոհամակարգ նրանց պահանջմունքների շուրջ:

***Մենք թիմային ենք*** – Մենք խրախուսում ենք մեր աշխատակիցների նորարարական մոտեցումները և համոզված ենք, որ միայն թիմային ջանքերով է հնարավոր հասնել գերազանց արդյունքների:

# Մեր ձեռքբերումները

- ✓ **B1** - կոնտրագենտի ռիսկի երկարաժամկետ վարկանիշ (CRRs)
- ✓ **B2** - տեղական արժույթով և արտարժույթով ներդրվող ավանդների երկարաժամկետ վարկանիշ

IDBank-ը առաջին հայկական բանկերից մեկն է, որն առաջարկում է **SWIFT global payment innovation (gpi)** ծառայություններ:

IDBank- ը առաջին հայկական բանկն է, որը պաշտոնապես միացել է Առևտրի Միջազգային Պալատին (ԱՄՊ):

Բանկը ստացել է ՉՎԵԲ մրցանակը՝ ՉՎԵԲ առևտրի ֆինանսավորման էքսպերտի ոլորտում

Բանկը միացել է ֆինանսների և առևտրի բանկային միությանը **(BAFT)**՝ միջազգային համագործակցության զարգացման շրջանակներում:

BSI-ի կողմից Բանկին շնորհվել է Տեղեկատվական անվտանգության կառավարման միջազգային համապատասխանության վկայագիր **ISO/IEC 27001:2013**

Բանկը BSI-ի կողմից ստացել է Որակի կառավարման համակարգի վկայագիր **ISO 9001:2015**

Բանկի կողմից թողարկված անվանական արժեկտրոնային պարտատոմսերը ցուցակվել են AMX- ում և ներառված են պարտատոմսերի հիմնական Abond ցուցակում

IDBank -ը **VISA** քարտերի ամենախոշոր թողարկողն է Հայաստանում

# Բանկը որպես հաշվետու թողարկող

Բանկն իր պատմության ընթացքում առաջին անգամ թողարկել և տեղաբաշխել է պարտատոմսեր 2016 թվականին: Բանկի կողմից պարտատոմսերի թողարկման և տեղաբաշխման նպատակն է միջոցների ներգրավումը, որոնք ուղղվում են Բանկի հիմնական գործունեության ֆինանսավորմանը:

2022 թվականի ընթացքում բանկը հաջողությամբ իրականացրել է 6 պարտատոմսերի թողարկում:

| 2022 թվական | փետրվար | փետրվար (II) | ապրիլ | հոկտեմբեր | հոկտեմբեր (II) | նոյեմբեր |
|---|---|---|---|---|---|---|
| Թողարկման ընդհանուր ծավալը | **5 մլն** ԱՄՆ դոլար | **1,5 մլրդ** ՀՀ դրամ | **614 հազ** ԱՄՆ դոլար | **500 մլն** ՀՀ դրամ | **5 մլն** ԱՄՆ դոլար | **5 մլն** ԱՄՆ դոլար |
| Տարեկան եկամտաբերությունը | 4.0% | 9.25% | 3.0% | 9.5% | 3.75 % | 3.75 % |

## Թողարկված պարտատոմսեր (մլրդ ՀՀ դրամ)




2022 թվականի վերջի դրությամբ թողարկման պարտատոմսերից առաջնային շուկայում տեղաբաշխվել է մոտ 15,6 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով և 1,9 մլրդ ՀՀ դրամ անվանական արժեքով պարտատոմսեր:

2022 թվականի վերջի դրությամբ երկրորդային շուկայում շրջանառվում են IDBank-ի կողմից իրականացված 6 թողարկումների պարտատոմսերը, որոնց ընդհանուր ծավալը կազմում է 20,1 մլն ԱՄՆ դոլար և 1,5 մլն ՀՀ դրամ:

Բոլոր պարտատոմսերը թողարկվել են 27 ամիս ժամկետայնությամբ և արժեկտրոնի վճարման եռամսյակային պարբերականությամբ:

## Պարտատոմսերում ներդրողների ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել

Պարտատոմս ձեռք բերելիս ներդրողը հիմնականում կրում է հետևյալ ռիսկերը՝

- ✓Շուկայական ռիսկ (Տոկոսադրույքի ռիսկ, Արտարժութային ռիսկ և այլն),
- ✓Պարտատոմսերի իրացվելիության ռիսկ,
- ✓Գնաճի ռիսկ

31/12/2022թ դրությամբ շուկայում ներդրողի ռիսկերի գծով էական փոփոխություններ չեն արձանագրվել:

# 2 Ռազմավարական հաշվետվություն


Խորհրդի նախագահի ուղերձը 10
Վարչության նախագահի ուղերձը 11
ՀՀ տնտեսությունը 12
Մեր ռազմավարական արդյունքները 15
Ֆինանսական արդյունքները 19
Մեր անձնակազմը 22

# Խորհրդի նախագահի ուղերձը



**Վարտան Դիլանյան**

**«ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ**

Ծնվել է 1971 թվականի հուլիսի 24-ին:

Գերազանցությամբ ավարտել է Միջազգային հարաբերությունների Մոսկվայի պետական ինստիտուտը, ինչպես նաև Executive MBA «Սկոլկովո» կառավարման դպրոցում:

Վարտան Դիլանյանն ունի ավելի քան 30-ամյա աշխատանքային փորձ ֆինանսների և խորհրդատվության ոլորտում:

Մեծ փորձ ունի միջազգային խոշորագույն աուդիտորական ընկերություններում, 1993 թվականից աշխատել է Արթուր Անդերսեն ընկերությունում (Մոսկվայի, Ալմա-Աթայի, Տաշքենդի և Բիշքեկի գրասենյակներում), իսկ ավելի ուշ՝ 2002 թվականից ղեկավարել է Ռուսաստանի և ԱՊՀ երկրների ֆինանսական շուկաների ստորաբաժանումը Ernst & Young ընկերությունում մինչև 2008 թվականը:

Վարտան Դիլանյանը աշխատել է նաև բանկային ոլորտում՝ իրականացնելով բանկերի ռազմավարական կառավարում և խորհրդատվություն, իսկ ավելի ուշ միացել է Accenture-ին՝ 2011 թվականին զբաղեցնելով Ռուսաստանում Ֆինանսական պրակտիկայի կառավարիչ - տնօրենի պաշտոնը, ապա՝ Ռուսաստանում Accenture-ի գործադիր տնօրենի պաշտոնը:

Ներկայում գլխավորում է մասնավոր միջազգային խորհրդատվական ընկերություն, որը գործունեություն է ծավալում տարբեր երկրներում, այդ թվում նաև՝ Ղազախստանում:

2016թ-ին նշանակվել է «ԱյԴի Բանկ» ՓԲԸ Խորհրդի նախագահ:

**Հարգելի՛ հաճախորդներ և գործընկերներ,**

2022 թվականին IDBank-ը գրանցել է էական հաջողություններ, հիմնականում մեր հաճախորդների և գործընկերների վստահության բարձր մակարդակի, ինչպես նաև մեր թիմի համակարգված աշխատանքի շնորհիվ: Մեզ համար կարևոր են ինչպես մեր կողմից առաջարկվող պրոդուկտների թվայնացման բարձր մակարդակը, ժամանակակից և արդիական լուծումները, այնպես էլ մեր հաճախորդներին բարձրակարգ և իրենց պահանջներին համապատասխան ծառայություններ մատուցելը:

Այս նպատակով մենք մշտապես ուսումնասիրում ենք մեր հաճախորդներին և նրանց ֆինանսական կարիքները, և մեծ ջանք ու ռեսուրս ենք ներդնում նրանց լավագույն փորձառություն ապահովելու համար: Այդ փորձառության կարևոր և անբաժանելի մասը մեր էկոհամակարգն է, որը համատեղում և միավորում է ծառայությունների լայն շրջանակ՝ բանկային, վճարահաշվարկային և հնարավորություն է տալիս մեր հաճախորդին խնայել 21-րդ դարի ամենակարևոր ռեսուրսը՝ ժամանակը:

2022-ի ընթացքում հեռավար գործիքակազմի լրամշակումից բացի շարունակել ենք մասնաճյուղերի արդիականացումը՝ ապահովելու հաճախորդների սպասարկման միջազգային ստանդարտներ:

Լինելով թվային բանկինգի առաջատարներից, մենք շարունակում ենք զարգացնել հաճախորդների կողմից արդեն սիրված և լայնորեն օգտագործվող թվային ապառիկը՝ Rocket line-ը, զգալիորեն մեծացնելով 0% «ստացիր հիմա վճարիր հետո» (Buy now, Pay later (BNPL)) ձևաչափով աշխատող գործընկերների ցանկը: Հաշվի առնելով բոլոր Idram QR-ով վճարումներ ընդունող վաճառակետերը (որոնց քանակը արդեն շուրջ 15,000 է), առցանց խանութները և ծառայությունները, որտեղ գործում է Rocket line թվային ապառիկը, հպարտորեն կարձանագրեմ, որ IDBank-ը այդ ոլորտի առաջատարն է ոչ միայն Հայաստանում, այլ նաև Արևելյան Եվրոպայում:

2022 թվականին շարունակեցինք զարգացնել մեր քարտային պրոդուկտները. VISA ընկերության հետ համատեղ թողարկեցինք երկու նոր քարտատեսակ ՝ պրեմիում դասի Visa Business Platinum քարտը՝ նախատեսված բիզնեսի համար, և Travel քարտը՝ մեր շուկայում առաջին քարտը ճամփորդական նպատակների համար: Այսպիսով, ամրապնդել ենք մեր դիրքերը որպես ամենաշատ վճարային քարտեր թողարկող բանկերից մեկը Հայաստանում:

Մենք հատուկ ուշադրությամբ ենք մոտենում կորպորատիվ հաճախորդներին առաջարկվող փաթեթային լուծումներին: «Ձեր բիզնեսը, մեր լուծումները» կարգախոսի ներքո բիզնեսին առաջարկել ենք սպասարկման համապարփակ մոտեցում, որը կլուծի բիզնեսի բոլոր խնդիրները միանգամից և մեկ տեղում:

Մտածելով և հոգ տանելով մեր հաճախորդի մասին՝ մենք շարունակելու ենք աշխատել թվային ժամանակակից լուծումների և մեր հաճախորդին հնարավոր լավագույն փորձառություն ապահովելու ուղղությամբ:

Շնորհակալություն վստահության համար

**Հարգանքով՝**
**Խորհրդի նախագահ**
**Վարտան Դիլանյան**

# Վարչության նախագահի ուղերձը



**Միհր Աբրահամյան**
**Վարչության նախագահ**

Ծնվել է 1975թ. հոկտեմբերի 16-ին:

1997թ ավարտել է Երևանի պետական ժողովրդական տնտեսության ինստիտուտի Կառավարման և տնտեսական կապերի ֆակուլտետը:

2004թ. ավարտել է ԱՄՆ Թաֆթս համալսարանի Ֆլետչերի Իրավունքի և Դիվանագիտության դպրոցը: Ունի CFA I, II մակարդակների որակավորում:

1999թ.-ից աշխատել է ՀՀ կենտրոնական բանկում, 2007–2012թթ.՝ որպես ՀՀ կենտրոնական բանկի ֆինանսական համակարգի կարգավորման վարչության Բանկային համակարգի կարգավորման բաժնի ղեկավար, 2012 – 2018 թթ.՝ Ֆինանսական համակարգի կարգավորման վարչության պետ:

2019թ. նշանակվել է IDBank-ի Վարչության նախագահ:

**Հարգելի գործընկերներ և հաճախորդներ,**

Գաղտնիք չէ, որ 2022-ը թռիչքային աճի տարի էր հայաստանյան բանկային համակարգի համար:

Տարին մեկնարկեց նոր հաճախորդների աննախադեպ հոսքով, և ուրախությամբ պետք է նշեմ, որ IDBank-ն այս փուլը պատվով հաղթահարեց: Հաճախորդների հետաքրքրությունը դեպի IDBank-ն առաջին հերթին պայմանավորված էր Idram&IDBank թվային հարթակի ժամանակակից լուծումներով, որոնք մենք իհարկե տարվա ընթացքում շարունակել ենք զարգացնել՝ հարմարավետ պրոդուկտներ առաջարկելով մեր հաճախորդներին: Արդյունքում 2022-ի ընթացքում սպասարկել ենք 27%-ով ավելի շատ հաճախորդի, թվային ուղիներով սպասարկվող հաճախորդների թիվն աճել է մոտ 55%-ով:

2022-ի ընթացքում և նախորդ տարիների շարունակական ակտիվ ջանքերի շնորհիվ IDBank-ը Հայաստանում միջազգային համակարգերի քարտերի թողարկմամբ առաջին տեղն է զբաղեցնում շուկայում և ընդհանուր ակտիվ քարտապանների քանակով առաջատարներից է:

Մենք շարունակել ենք զարգացնել Rocket line թվային ապառիկը, որի միջոցով տարվա ընթացքում կնքվել է մոտ 1մլն պայմանագիր: Իսկ Rocket line 0%-ն արդեն հասանելի է 5000-ից ավելի Idram QR սպասարկող վաճառակետերում և առցանց խանութներում, որտեղ կա Idram&IDBank հավելվածով վճարման հնարավորություն:

IDBank-ն էական առաջընթաց է գրանցել նաև մի շարք այլ ոլորտներում. 2022-ի համեմատ ունենք ակտիվների 57% աճ, վարկային պորտֆելը գերազանցել է 121 մլրդ ՀՀ դրամը, Բանկը նաև առաջատար դիրքեր է զբաղեցրել կապիտալի և իրացվելիության բարձր ցուցանիշներով, ինչը խոսում է ֆինանսական կայունության մասին:

2022-ին իրականացված ծրագրերն ու ֆինանսական հաջողությունները հիմք և հնարավորություն են տալիս շարունակել մեր հավակնոտ ծրագրերն ու ոչ միայն մեր հաճախորդներին առաջարկել հարմար թվային լուծումներով հագեցած բանկային պրոդուկտներ, այլ նաև շարունակել ներդրում ունենալ մեր երկրի սոցիալ-տնտեսական կյանքում: 2022 թվականի ընթացքում միայն «Մի դրամի ուժը» նախաձեռնության շնորհիվ մեր գործընկեր Իդրամ ընկերության հետ բարեգործական հիմնադրամների ենք ուղղել ավելի քան 56մլն ՀՀ դրամ: Մենք նաև մի շարք ծրագրեր ենք իրականացրել՝ ուղղված Արցախի երեխաներին և տեղահանված ընտանիքներին:

Միանշանակ է, որ IDBank—ը շարունակելու է իր թվային զարգացման ուղին, որի հաջողության գրավականն իհարկե մեր հաճախորդներն ու գործընկերներն են:
Շնորհակալություն, որ մեր կողքին եք:

**Հարգանքով՝**
**Վարչության նախագահ**
**Միհր Աբրահամյան**

# ՀՀ տնտեսությունը

### Տնտեսական ակտիվության ցուցանիշ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

### ՀՆԱ ընթացիկ գներով, մլրդ ՀՀ դրամ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

### ՀՆԱ-ի կառուցվածքը ըստ հիմնական բաղադրիչների ,ՀՀ դրամ




Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե

2022 թվականի արդյունքներով ՀՆԱ-ի իրական աճը կազմել է 14.2%՝ հիմնականում պայմանավորված մարդկային և ֆինանսական կապիտալի ներհոսքի հետ:

Կանխատեսվում է, որ 2023 թվականին՝ անկախ աշխարհաքաղաքական զարգացումներից, 2022 թվականին տնտեսական աճի վրա ավելացած ներուժը կշարունակի ունենալ դրական ազդեցություն:

# ՀՀ տնտեսություն

Միջին տարեկան փոխարժեքներ




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Գնաճ (տարեկան կտրվածքով, ժամանակահատվածի վերջ,%)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

Վերաֆինանսավորման դրույքաչափ (%)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

2022 թվականի ընթացքում տեղի ունեցավ դրամի էական արժեւորում դոլարի նկատմամբ:

2022 թվականին Հայաստանում գնաճի տեմպը կազմել է 8.3%, ինչը կրկնակի գերազանցել է ԿԲ նպատակային ցուցանիշը (4%):

ԿԲ-ն գնաճի տեմպը կարգավորելու նպատակով մի քանի անգամ բարձրացրել է վերաֆինանսավորման դրույքաչափը՝ տարեվերջին դարձնելով 10.8%:

# Ֆինանսական համակարգ

## Բանկերի ակտիվների և վարկերի հարաբերակցությունը ՀՆԱ-ին




## Բանկային ավանդներ և վարկեր, մլրդ ՀՀ դրամ




## 1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների միջին տոկոսադրույք




2022 թվականի արդյունքներով Վարկեր/ՀՆԱ ցուցանիշը կազմել է 46%՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 7 տոկոսային կետով:

2022 թվականի ընթացքում 1 տարուց ավելի ժամկետայնությամբ վարկերի և ավանդների տոկոսադրույքները համեմատաբար կայուն են մնացել:

# Մեր ռազմավարական արդյունքները



Կարեն Նալբանդյան
Բիզնեսի զարգացման տնօրեն

Մեր հիմնական նպատակը հաճախորդների լավագույն փորձառությունն է, լինի դա մասնաճյուղում, թե հեռավար ծառայություններ մատուցելիս: Որպես նորարարության վրա հիմնված կառույց՝ մենք առաջարկում ենք թվային հարթակ, որը թույլ է տալիս տրամադրել արագ, հարմարավետ և ապահով հեռավար ծառայություններ: Մենք մշտապես ընդլայնում ենք մեր թվային պրոդուկտների և ծառայությունների շրջանակը՝ ստեղծելով հաճախորդակենտրոն էկոհամակարգ, որը այսօր առաջատարն է հայկական շուկայում ակտիվ հաճախորդների քանակով:

2022 թվականը հանդիսացավ թռիչքային աճի տարի մեզ համար տարբեր ուղղություններով, առաջին հերթին՝ թվային: Լայն տարածում է գտել հաճախորդների և գործընկերների շրջանում Rocket line թվային ապառիկը, որը գործում է բազմաթիվ ծառայությունների համար Idram QR-ով վճարելիս վճարելիս, ավելի քան 15,000 վաճառակետերում և առցանց խանութներում, որոնցից 5,000-ից ավել կետերում գործում է անտոկոս ապառիկը (Rocket line 0%): 2022 թ. վերջի դրությամբ անցած տարվա համեմատ գրանցել ենք Rocket line-ի միջոցով իրականացրած գնումների քանակի 2 անգամ աճ, որոնց թիվը գերազանցել է 1 միլիոնը: Rocket line 0% գործարքները մեկ տարվա ընթացքում աճել են 5 անգամ:

Զուգահեռ, տարվա ընթացքում ամրապնդել ենք մեր առաջատար կարգավիճակը նաև քարտային շուկայում. առաջարկել ենք երկու նոր քարտատեսակ VISA ընկերության հետ՝ բիզնես և ճամփորդական նպատակների համար՝ առաջին Travel card-ը և առաջին Business Platinum card-ը մեր շուկայում: Ընդհանուր ակտիվ քարտերի քանակը գերազանցել է 330 հազարը, իսկ քարտային գործարքների ծավալը նախորդ տարվա համեմատ աճել է 2,4 անգամ:

Համագումարով, Idram&IDBank միասնական հարթակով իրականացված բոլոր անկանխիկ վճարումների ծավալը՝ ներառյալ քարտային, առցանց, QR վճարումները, կազմել է շուկայի անկանխիկ վճարումների 35%-ը:







Հավատարիմ մնալով մեր ռազմավարությանը՝ մշտապես զարգացնում ենք թվային ուղիները՝ հաճախորդներին առաջարկելով ֆինանսները կառավարելու ճկուն և հարմարավետ գործիքների փաթեթ: Արդյունքում, 2022 թվականի դրությամբ մեր ակտիվ հաճախորդների 78%-ը գրանցված է Բանկի թվային հարթակներում, իսկ նրանց ավելի քան 61%-ը ակտիվ է թվային ուղիներում ամսական կտրվածքով:

Մենք մշտապես հետևում ենք ոլորտում տեղի ունեցող զարգացումներին և միտումներին, շարունակական ընդլայնելով մեր նորարարական գործունեությունը, մեր հաճախորդների համար դառնալով առաջին ընտրության ֆինանսական գործընկեր:

# Idram&IDBank -ը հայկական առաջատար թվային էկոհամակարգն է թվային բանկինգի, վճարային և ֆինանսական ծառայությունների ոլորտում

**500,000+ օգտատեր՝** Հայաստանի տնտեսապես ակտիվ բնակչության 40%-ը

Թվային **բանկինգի լիարժեք ֆունկցիոնալություն**

**Հեռավար գրանցում և հաճախորդների նույնականացում** սմարթֆոնի միջոցով

**15 բանկերի և 18 վարկային հաստատությունների համար վճարային ագրեգատոր,** համագործակցություն 1000+ ծառայություններ մատուցողների հետ, ներառյալ. երկրի բոլոր հիմնական առցանց ծառայությունները և հանրային ծառայությունները

**Անհպում QR վճարումներ 15000+ ֆիզիկական վաճառակետերում,** ներառյալ. սուպերմարկետներ, ռեստորաններ, սրճարաններ, խանութներ, հյուրանոցներ և այլն

**Ապահով վճարում** Հայաստանի **ավելի քան 900 առցանց խանութներում web QR -ի և բջջային դրամապանակի միջոցով**

Ինտեգրված **ստացիր հիմա վճարիր հետո** լուծումը առցանց և QR վճարման տարբերակով գնումների և ծառայությունների համար՝ **15,000+ POS-ով,** ներառյալ **5,000+ POS, որը տրամադրում է մինչ 6 ամիս Rocket line 0% անտոկոս վճարման հնարավորություն**

**330,000+ ակտիվ քարտեր**

**Առաջատարը Հայաստանում՝ VISA քարտերի թողարկման ոլորտում**

**P2P ակնթարթային դրամական փոխանցում հեռախոսահամարով և քարտի համարով** Հայաստանում և արտերկրում

**Idram Junior – Հայաստանում երեխաների և դեռահասների համար նախատեսված առաջին ֆինանսական հավելվածը՝** անհպում QR վճարումների և փոխանցումների ֆունկցիոնալությամբ

**Id+ հավատարմության թվային հարթակ** վիրտուալ բոնուսային և նվեր քարտերով **առևտրով զբաղվողների և օգտատերերի համար, ինչպես նաև բոնուսային փոխանակում (աճուրդ)**

# Մեր հաճախորդները

Բանկի կողմից մատուցվող ծառայություններից հնարավորինս հարմարավետ օգտվելու նպատակով Բանկն այժմ առաջարկում է հետևյալ հիմնական ուղիները.



Բազմաֆունկցիոնալ ինտերնետ և մոբայլ բանկինգ




Նորարարական և հարմարավետ մասնաճյուղեր



Privilege banking



24/7 ինքնասպասարկման գոտիներ



24/7 հեռախոսազանգերի կենտրոն

## Կորպորատիվ հաճախորդներ



~ 15.5 հազ հաճախորդ

+48% տարեկան

Բանկը շարունակաբար զարգացնում է կորպորատիվ հաճախորդների սպասարկման մշակույթը՝ առաջարկելով համալիր ֆինանսական ծառայություններ և լուծումներ բոլոր ոլորտներում գործունեություն ծավալող կազմակերպությունների համար, ինչպես նաև ապահովում է զարգացման բարենպաստ պայմաններ իր բոլոր հաճախորդների համար: Արդյունքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ ՀՀ շուկայում թվային ապառիկի գծով առաջատար: 2022թ. ընթացքում Rocket line 0% թվային ապառիկի գործընկերների շարքերը համալրել են ավելի քան 2000 առևտրային կետեր՝ ապահովելով շուրջ 80% տարեկան աճ:
- ✓ ՀՀ Բանկային համակարգում առաջին պրեմիում դասի բիզնես քարտի ներդրում՝ Visa Business Platinum:
- ✓ Կորպորատիվ ընդհանուր հաճախորդների 48%, իսկ ակտիվ հաճախորդների դեպքում՝ 56% տարեկան աճ
- ✓ Անկանխիկ վճարային գործիքների ոլորտում՝ POS/VPOS տերմինալների 80%, իսկ շրջանառության ծավալների շուրջ 150% տարեկան աճ
- ✓ Վարկավորման ոլորտում հատուկ առաջարկներ կորպորատիվ հաճախորդների համար

## Մանրածախ հաճախորդներ



~ 500 հազ հաճախորդ

+26% տարեկան

2022 թվականի վերջի դրությամբ Բանկի մանրածախ հաճախորդների թիվը շուրջ 500,200 է: Բանկը մշտապես զարգացնում է իր գործող ծառայությունները, մշակում և ներդնում է նորը՝ հաճախորդներին առաջարկելով լավագույն լուծումները: Արդյունքում գրանցել ենք հետևյալ ձեռքբերումները.

- ✓ Առաջինը Հայաստանում Travel քարտի թողարկում ճանապարհորդների համար
- ✓ Հիփոթեքային կենտրոնի ստեղծում, որը մրցակցային, ճկուն և շահավետ պայմաններով հիփոթեքային վարկեր է տրամադրում առավելագույնը 2 աշխատանքային օրում
- ✓ IDsalary աշխատավարձային շահավետ փաթեթներ
- ✓ Մանրածախ ընդհանուր հաճախորդների 26.3%, իսկ ակտիվ հաճախորդների դեպքում 38% տարեկան աճ
- ✓ Մանրածախ քարտերի մոտ 30% տարեկան աճ
- ✓ Քարտով վճարումների 115% տարեկան աճ
- ✓ Մանրածախ վարկային պորտֆելի 20% տարեկան աճ

# Կորպորատիվ սոցիալական պատասխանատվություն

*«Մի դրամի ուժ» արդեն հատել է 111 միլիոն դրամի շեմը՝ աջակցելով 9 շահառու կազմակերպությունների և հիմնադրամների:*




- 2022 թվականի **հունվար** և **փետրվար** ամիսների ընթացքում կուտակված «մի դրամների» ողջ գումարը՝ 9.808.684 ՀՀ դրամ, փոխանցվեց «Ժպիտների քաղաք» բարեգործական հիմնադրամին՝ նպաստելով քաղցկեղով հիվանդ երեխաների համար թանկարժեք դեղամիջոցների ձեռքբերմանն ու երեխաների բուժմանը:

- **Մարտ** և **ապրիլ** ամիսների մեր շահառուն բնապահպանական ոլորտն էր. գարնան առաջին երկու ամիսների ընթացքում հավաքված բոլոր «մի դրամները» փոխանցվել են My Forest Armenia բնապահպանական կազմակերպությանը՝ Հայաստանի տարածքում անտառվերականգնման ծրագրին օժանդակելու համար: IDBank-ն ու Իդրամը 10.757.867 գումար են փոխանցել հիմնադրամին, մասնակցել են Լոռու մարզի Ձորաշեն համայնքում անտառի հիմնման աշխատանքներին:

- Մի դրամի ուժը նախաձեռնության **մայիս** և **հունիս** ամիսների գումարը՝ 9.107.498 դրամ, ուղղվեց «Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամին՝ նպաստելու Լոռու մարզի տարբեր համայնքների երեխաների կրթության կազմակերպմանը:




- «Մի դրամի ուժը» նախաձեռնության **հուլիս** ամսվա շահառուն «ՔայլՏեք» ընկերությունն էր, որը ստեղծել է բացառիկ հայկական նորարարական արտադրանք՝ MetaGait սարքը: MetaGait-ը օգնում է հաշմանդամություն ունեցող զինվորներին և մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաներին վերականգնել շարժունակությունը՝ կանխելով անշարժության հետևանքով առաջացող ավելի քան 30 հիվանդություններ: Ծրագրի ավարտին «ՔայլՏեք» ընկերությանը փոխանցվեց 4.248.945 ՀՀ դրամ:



- 2022թ. **օգոստոս** ամսվա շահառուն «Հերոսների վերականգնողական քաղաք» հոգեբանական կենտրոնն է, որին փոխանցվեց «Մի դրամի ուժը» նախաձեռնության շրջանակում ամսվա կուտակված ամբողջ գումարը՝ 4.676.836 դրամ:

- 2022թ. **սեպտեմբեր** ամսվա շահառուն «4090» հիմնադրամն է: Հիմնադրամի նպատակը Հայրենիքի պաշտպաններին կրթաթոշակների տրամադրման, կրթական ծրագրերի իրականացման, հմտությունների բարձրացման և վերապատրաստումների իրականացումն է: Սեպտեմբեր ամսվա ընթացքում կատարվել է 4.631.690 վճարում, որը «Մի դրամի ուժը» նախաձեռնության շրջանակում կուղղվի 4090 հիմնադրամին:



- Մի դրամի ուժը նախաձեռնության 2022թ. **հոկտեմբեր** ամսվա շահառուն Հայրենիքի պաշտպանի վերականգնողական կենտրոնն է, որին փոխանցվեց ամսվա կուտակված «մի դրամների» գումարը՝ 4.827.643 ՀՀ դրամը:

- «Մի դրամի ուժի» 2022թ. **նոյեմբեր** ամսվա շահառուն «Արեն Մեհրաբյան» բարեգործական հիմնադրամն է, որի նպատակն է հիմնել աէրոտիեզերական շարժիչների և ուղղահայաց վերելքով ու վայրէջքով թռչող էլեկտրական սարքերի մեքենաշինական արտադրություն Հայաստանում: Ծրագրի ավարտին հիմնադրամին փոխանցվեց 4.653.223 դրամ:




- «Մի դրամի ուժի» **դեկտեմբեր** ամսվա շահառուն Հայաստանի երեխաների առողջության հիմնադրամն էր, որին փոխանցվեց 3.531.799 ՀՀ դրամ : Հիմնադրամը կազմակերպում է կյանքի համար վտանգ սպառնացող հիվանդություններով երեխաների բուժումը:

# Ֆինանսական արդյունքներ



Արման Ասատրյան

Ֆինանսական տնօրեն,
Վարչության անդամ

2022 թվականի վերջի դրությամբ IDBank-ի ընդհանուր ակտիվների մեծությունը կազմել է 309 մլրդ ՀՀ դրամ՝ արձանագրելով 57% տարեկան աճ: Ակտիվների մոտ 40%-ը (121 մլրդ ՀՀ դրամ) կազմել են հաճախորդներին տրված վարկերը և փոխառությունները: Բանկը նաև էականորեն (ավելի քան 50 մլրդ ՀՀ դրամով) մեծացրել է արժեթղթերում իրականացված ներդրումները:

2022 թվականի վերջի դրությամբ Բանկի ընդհանուր պարտավորությունների մեծությունը կազմել է 250 մլրդ ՀՀ դրամ, որի գերակշիռ մասը (ավելի քան 80%) կազմել են հաճախորդների ընթացիկ հաշիվները, ավանդները և Բանկի կողմից թողարկված պարտքային արժեթղթերը:




Ամփոփելով IDBank-ի 2022թ. ֆինանսական արդյունքները՝ հարկ է նշել, որ Բանկը կարողացել է արձանագրել էական աճ առևտրային գործառնությունների գծով, ինչպես նաև բարելավել է կոմիսիոն եկամտաբերության հիմնական ցուցանիշները: Բանկին հաջողվել է գեներացնել շուրջ 13.5 մլրդ ՀՀ դրամ զուտ շահույթ՝ գրանցելով 25.9% կապիտալի շահութաբերություն և 5.3% ակտիվների շահութաբերություն:







Հաշվի առնելով, որ Բանկի կապիտալի համարժեքության, իրացվելիության մակարդակները գտնվում են բավականին բարձր մակարդակում, Բանկի զուտ մասհանումների մակարդակը համեմատաբար ցածր է՝ Բանկը ունի լայն հնարավորություններ իր գործունեությունը ընդլայնելու և նոր նախագծեր իրականացնելու համար՝ առանց վտանգելու Բանկի ֆինանսական կայունությունը անգամ բարդ մակրոտնտեսական իրավիճակում:

# Ֆինանսական արդյունքներ

**Ընդամենը ակտիվներ (մլրդ ՀՀ դրամ)**




**Ընդամենը պարտավորություններ (մլրդ ՀՀ դրամ)**




**Ընդամենը կապիտալ (մլրդ ՀՀ դրամ)**




**Շահույթ տարվա համար (մլրդ ՀՀ դրամ)**




**Զուտ տոկոսային եկամուտ (մլն ՀՀ դրամ)**



## Բանկի պորտֆելները

### Հաճախորդներին տրված վարկեր և փոխառություններ (ամորտիզացված արժեքով հաշվառվող) , մլն ՀՀ դրամ







### Մանրածախ վարկային պորտֆելի կառուցվածքը




### Կորպորատիվ վարկային պորտֆելի կառուցվածքը




### Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ (մլրդ դրամ)



# Մեր անձնակազմը

Մեր աշխատակիցը մեր հաջողության գրավականն է: Մեր թիմային աշխատանքի, անհատական մոտեցման և բարձր կատարողականի շնորհիվ այս տարի հնարավոր եղավ հասնել մի շարք հաջողությունների, ստեղծել նոր ու հետաքրքիր գաղափարներ և կատարելագործել մեր գործող նախագծերը:

Բանկի մշակույթն է, որ աշխատակիցները միասին համախմբված լինեն մեկ նպատակի շուրջ և թիմային աշխատանքի շնորհիվ հասնեն հաջողությունների՝ Բանկին դարձնելով աշխատաշուկայի լավագույն գործատուներից մեկը:

Բանկը, որպես գործատու, անում է բազմաթիվ քայլեր աշխատանքային միջավայրը մշտապես ապահով և գրավիչ պահելու, աշխատակիցների համար ֆինանսական և ոչ ֆինանսական մոտիվացիոն համակարգերի ստեղծման և բարելավման համար:

2022թ. շարունակեցինք մեր աշխատակիցների աշխատանքային պայմանների բարելավման ու գոհունակության բարձրացման քայլերը, ինչպես նաև նոր հնարավորություններ ստեղծեցինք մշտական մասնագիտական աճի և հմտությունների բարելավման համար:

Բանկի ներքին կորպորատիվ  և ուսումնական պորտալները լայն հնարավորությունների դռներ են բացում աշխատակիցների համար՝ ծանոթացնելով նրանց տեղի ունեցող բոլոր նորություններին և հաջողություններին, ինչպես նաև մեկ էլեկտրոնային հարթակի տակ է ամփոփում աշխատանքային և սոցիալական շփումների և կարևոր տեղեկատվության տարածումը: Լայնորեն կիրառվում է նաև էլեկտրոնային գրադարանն ու օնլայն դասընթացների շտեմարանը, ինչպես նաև մի շարք առկա և էլեկտրոնային կուրսեր բոլոր օղակի աշխատակիցների համար:

Այս տարի ևս հնարավոր եղավ կազմակերպել մի շարք թիմային միջոցառումներ, որոնք ավելի ջերմացրին և ամրապնդեցին մեր աշխատակիցների աշխատանքային կապերը և հնարավորություն տվեցին համատեղել աշխատանքն ու հանգիստը:

**Մարիանա Էդիլյան**
**Մարդկային կապիտալի կառավարման գծով տնօրեն**

**653** Բանկի աշխատակիցների փաստացի թվաքանակը 2022 թվականի վերջի դրությամբ

**Աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %**




**Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ տարիքի, %**




**Աշխատակիցների կազմն ըստ սեռի, %**




**Ղեկավար աշխատակիցների կազմն ըստ սեռի, %**



## Թիմային և կորպորատիվ մշակույթ

Մենք Թիմային ենք – Բանկի հիմնական արժեքներից մեկը ներքին մշակույթի ամուր սյունն է և պարտադիր պայմանը հաջողության համար:

Այս տարի ևս կազմակերպվեցին բազմաթիվ թիմային և կորպորատիվ միջոցառումներ, թիմային աշխատանքի կարևորման հիմքում ընկան շարունակական ռազմավարական հանդիպումները, ինչպես նաև աշխատակիցների կատարողականով պայմանավորված խրախուսումները:





Բանկի կողմից կազմակերպված բազմաթիվ մեծ ու փոքր միջոցառումներ հնարավորություն տվեցին աշխատակիցներին շփվել աշխատանքից դուրս և միասին աջակցել տարբեր սոցիալական նախագծերի: Շարունակեցինք հնարավորություն տալ աշխատակիցներին առավել ճկուն աշխատանքային ռեժիմով աշխատելուն, կատարելագործվեցին գործընթացներն ու տեխնիկական գործառույթները հեռավար ռեժիմը հնարավորինս անխափան և արդյունավետ դարձնելու համար:








2022թ. ընթացքում կորպորատիվ սոցիալ պատասխանատվության ծրագրերն անդրադարձան և՛ երեխաներին, և՛ անապահով ընտանիքներին, և՛ զինվորներին, ինչպես նաև սահմանամերձ գյուղերի բնակիչներին:

## Վարձատրություն և մոտիվացիա

Բանկը կարևորում է ֆինանսական շուկայի վարձատրությանը և արտոնությունների պատշաճ և ժամանակին հետևելն ու կիրառելը, ինչպես նաև աշխատակիցների խրախուսման համակարգերի մշտապես բարելավելը: Բանկը աշխատակիցներին խրախուսում է ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական եղանակներով: Բանկի արտոնությունների փաթեթը մշտապես վերանայվում և թարմացվում է:

Մոտիվացիոն գործընթացների շարքին դասվեցին բազմաթիվ ներքին մրցույթները, Վարչության նախագահի հետ լավ կատարողական ցուցաբերած աշխատակիցների հանդիպումներն ու տարբեր մրցաշարերի հաղթանակով մասնակցելը:

Աշխատավարձի տարեկան վերանայումները, ինչպես նաև պարգևավճարի ճկուն մոդելները բարձր ղեկավարության ուշադրության կենտրոնում են և կատարելագործվում են յուրաքանչյուր տարի՝ որպես Բանկի աշխատակիցների նյութական խրախուսման մշակույթի տարր:















## Աշխատակիցների ներգրավման քաղաքականություն

2022 թվականի ընթացքում թիմն ավելացել է շուրջ 251 նոր աշխատակցով՝ հիմնական շեշտադրումը դնելով տեղեկատվական տեխնոլոգիաների թիմի մեծացմանը, մասնաճյուղերի քանակապես հագեցմանը: Նոր աշխատակիցների մեծ քանակը պայմանավորված էր նաև նոր նախագծերի ներմուծմամբ և մասնաճյուղերի սպասարկման որակի բարձրացմամբ:



Շարունակելով կարևորել ներքին ռեսուրսի առաջընթացը՝ այս տարի հաստիքների շուրջ 20%-ը համալրվել է ներքին ռեսուրսի առաջխաղացման շնորհիվ, ինչպես շարքային, այնպես էլ ղեկավար օղակներում:

Բանկը շարունակում է իր ներգրավման քաղաքականությունը կառուցել՝ ուսանողների շրջանում նոր հնարավորություններ ստեղծելով և միևնույն ժամանակ թիրախավորելով ոլորտի առաջատար մասնագետներին մի շարք հաստիքների համալրելու գործընթացում:

## Կորպորատիվ մշակույթ եւ ներքին հաղորդակցում

Հետամուտ լինելով իր որդեգրած արժեքներին ու սկզբունքներին՝ Բանկը շարունակում է զարգացնել կորպորատիվ մշակույթն ու ներքին հաղորդակցման ուղիները:



Բանկի աշխատակիցներն ակտիվորեն օգտվում են կորպորատիվ հաղորդակցման հարթակից, որի շնորհիվ նրանք ժամանակին ու պատշաճ տեղեկացվում են նորությունների ու տեղի ունեցող փոփոխությունների մասին, մասնակցում են հարցումներին ու հանդես գալիս առաջարկություններով, մասնակցում տարբեր հետաքրքիր օնլայն մրցույթների և ինտերակտիվ հարցումների:

## Համագործակցություն ուսանողների հետ. Idream ծրագիր

Կրթության կարևորումը մեր կարևորագույն առաջնահերթություններից է: Բանկն ակտիվորեն համագործակցում է մի շարք բարձրագույն ուսումնական հաստատությունների հետ և մասնակիցը դառնում ոչ ֆորմալ կրթությանը:

2022 թ. Բանկը շարունակեց ուսանողների պրակտիկայի ծրագիրը՝ IDream ուսանողական ծրագիրը: Այս ծրագրի շնորհիվ ուսանողները ստանում են ֆինանսական ոլորտի տեսական գիտելիքներ և ձևավորում են հմտություններ, որոնք անհրաժեշտ են Բանկային ոլորտի սկսնակ աշխատակցին:

Ծրագրի  մասնակից ուսանողների 80%-ը համալրում են Բանկում առկա թափուր հաստիքները:

2022թ. երեք անգամ իրականացրել է «IDream» ծրագիրը, հնարավորություններ տալով ևս 16 նորավարտ ուսանողի սկսել իրենց կարիերան Բանկի հետ, այս կերպ արդեն ընդլայնելով  բանկ ընդունված մեր ուսանողների թիվը շուրջ 5 տասնյակի:



## Աշխատակիցների ուսուցում եւ զարգացում

Բանկի Ուսուցման և զարգացման կենտրոնը տարվա ընթացքում կազմակերպել և վերահսկել է աշխատակիցների վերապատրաստման գործընթացները, աշխատակիցների մոտիվացիայի բարձրացմանն ուղղված բազում հարցումների և միջոցառումների կազմակերպում:

Կարևորելով աշխատակիցների զարգացումն ու վերապատրաստումը՝ Բանկը կազմակերպել է 200-ից ավել օնլայն և օֆլայն վերապատրաստման դասընթացներ, կիսվել զանազան նյութերով, հետաքրքիր զարգացնող գրականությամբ և պրեզենտացիաներով: Աշխատակիցները մշտապես հնարավորություն ունեն վերապատրաստվել ոչ միայն արտաքին դասընթացների կամ Բանկում կազմակերպվող դասընթացների մասնակցելով, այլ նաև առցանց հարթակի միջոցով մասնակցել օնլայն դասընթացների իրենց հարմար ժամանակացույցով ու արագությամբ:

Հատուկ նշանակություն են տրվում  նաև միջազգային մասնագիտական կոնֆերանսների մասնակցությանը, բացի դա Բանկը մշտապես խրախուսում ու աջակցում է աշխատակիցներին ստանալու միջազգային որակավորումներ ու հավաստագրեր: Միջազգային որակավորումները  միտում ունեն դառնալու Բանկի վերին և միջին ղեկավար օղակի համար պարտադիր, որի փոխհատուցման մասով Բանկը կունենա աջակցություն:

2022 թվականի ընթացքում աշխատակիցների 81%-ը վերապատրաստվել է, որոնց 83%-ը մասնակցել է ներքին վերապատրաստման դասընթացների, իսկ 41%-ը վերապատրաստվել է՝ մասնակցելով արտաքին դասընթացների:

Հատուկ կարևորություն է տրվում մեր մասնաճյուղերի աշխատակիցների մասնագիտական որակների մշտապես բարձրացմանը, որի արդյունքում էլ ավելի բարձր մակարդակի է հասնում սպասարկման որակն ու հնարավորություն ստեղծվում աշխատակիցներին արագ բարձրանալ կարիերայի աստիճաններով:

Մենք գնահատում ենք մեր ղեկավար կազմի մշտական զարգացումը՝ դրանով խթանելով մեր մշտական աշխատողների հետագա զարգացումը, ինչպես նաև խրախուսում ենք մեր ղեկավար կազմին՝ մասնակցելու ինչպես Հայաստանում, այնպես էլ Հայաստանից դուրս անցկացվող միջազգային դասընթացներին, կոնֆերանսներին և սեմինարների:







3

# Կորպորատիվ կառավարում


Մեր բաժնետերերը և խորհուրդը 27

Ռիսկերի կառավարում 29

# Բանկի բաժնետերերը

2022
"FISTOCO" LTD 100% բաժնետեր

2016
"FISTOCO" LTD 59.7% բաժնետեր

2013
CreditBank S.A.L. 100% բաժնետեր

2009
CreditBank S.A.L. 51% բաժնետեր

# Բանկի խորհուրդը



**Վարդան Դիլանյան**
*Խորհրդի նախագահ*
2011-ին միացել է Accenture- ին `որպես Ռուսաստանի Դաշնության ֆինանսական ծառայություններ խմբի գործադիր տնօրեն: Ներկայում գլխավորում է մասնավոր և միջազգային խորհրդատվական ընկերություն, որը գործունեություն է ծավալում տարբեր երկրներում , այդ թվում նաև` Ղազախստանում:



**Կարեն Մարգարյան**
2003-ին միացել է Համաշխարհային Էկոնոմիկայի R&D ինստիտուտին (Մոսկվա): Ներկայումս Համաշխարհային Էկոնոմիկայի R&D ինստիտուտի տնօրենն է և աշխատում է Մոսկվայի ֆինանսաիրավական համալսարանի տնտեսագիտության և կառավարման ամբիոնում `որպես պրոֆեսոր:



**Արթուր Ջավադյան**
2008-2020 թթ. զբաղեցրել է ՀՀ Կենտրոնական Բանկի նախագահի պաշտոնը: Ներկայումս հանդիսանում է Հատուկ հանձնարարություններով դեսպան, ինչպես նաև Տնտեսական հեռանկարների կենտրոն-հիմնադրամի և Տնօրենների հայկական ինստիտուտի նախագահ:



**Ավետ Միրաքյան**
1998-ից սկսած` 10 տարի աշխատել է Արթուր Անդերսեն և Էրնսթ ընդ Յանգ աուդիտորական ընկերություններում:
2010-ից 2015 թթ.` գործընկեր, Էրնսթ ընդ Յանգ ընկերությունում ԱՊՀ ֆինանսական շուկաներում գործարքներին աջակցելու խորհրդատվական ծառայությունների պրակտիկայի ղեկավար:
Ներկայում մշակում է մի շարք Private Equity նախագծեր:



**Ալեքսեյ Կոմար**
2006-2017թթ. աշխատել է «Ernst and Young» / Էրնսթ ընդ Յանգ (ԱՊՀ) B.V.» Մոսկվայի մասնաճյուղում որպես Ավագ խորհրդատու / Մենեջեր / Ավագ Մենեջեր / Տնօրեն:2017 թվականից առ այսօր աշխատում է որպես բիզնես խորհրդատու մի շարք ֆինտեխ ծրագրերում:

# Բանկի խորհուրդը

Բանկի խորհուրդը իրականացնում է Բանկի գործունեության ընդհանուր ղեկավարումը՝ խորհրդի իրավասությանը վերապահված հարցերի շրջանակներում՝ համաձայն օրենքի և Բանկի կանոնադրության:

Խորհրդի լիազորություններից են՝

1. Բանկի գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, ներառյալ ռազմավարական զարգացման ծրագրի հաստատումը,
2. Բանկի գործադիր մարմնի անդամների նշանակումը,
3. Բանկում ներքին հսկողության ստանդարտների հաստատումը,
4. շահաբաժինների վճարման վերաբերյալ Ընդհանուր ժողովին առաջարկությունների ներկայացումը,
5. Բանկի տարեկան ֆինանսական հաշվետվությունների նախնական հաստատումը և Ընդհանուր ժողովին ներկայացումը,
6. Բանկի պարտատոմսերի և այլ արժեթղթերի տեղաբաշխման վերաբերյալ որոշումների կայացումը,
7. Բանկի մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ստեղծումը,
8. Օրենսդրությամբ սահմանված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը,
9. Օրենքով և Բանկի կանոնադրությամբ սահմանված այլ հարցերի վերաբերյալ որոշումների կայացումը:

Բանկի խորհուրդ

Խորհրդին կից ռիսկերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության կոմիտե

Հիմնական նպատակը

Կոմիտեի հիմնական նպատակներն են՝ ռիսկերի կառավարման համակարգերի, Բանկի ներքին աուդիտի և ներքին հսկողության աշխատանքների արդյունավետության բարձրացումը, տվյալ համակարգերի գործունեության հարցում Բանկի Խորհրդի կառավարչական և հսկողական գործառույթների իրականացման ապահովումը

Կոմիտեի հիմնական խնդիրներն են՝

1) Բանկի Խորհրդի կողմից Բանկի գործադիր մարմինների գործունեության մշտական հսկողության ապահովումը և Կոմիտեի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ Բանկի Խորհրդի անդամների արդյունավետ փոխգործակցության ապահովումը Բանկի ղեկավարության հետ.
2) Ռիսկերի կառավարման համակարգերի, ներքին աուդիտի և ներքին հսկողության աշխատանքների արդյունավետության և համարժեքության գնահատումը, Բանկի ներքին վերահսկողության ռիսկերի վրա հիմնված համակարգի ձևավորմանը մասնակցությունը
3) Կոմիտեի իրավասությանն առնչվող հարցերի վերաբերյալ առաջարկությունների մշակումը և տրամադրումը Բանկի Խորհրդին և Բանկի ղեկավարությանը:

# Հիմնական տնտեսական նորմատիվներ

Բանկի ֆինանսական կայունությունը բնութագրող երկու ցուցանիշները՝ կապիտալի համարժեքությունը և իրացվելիությունը, գտնվում են պահանջվող նվազագույն մեծությունից բարձր մակարդակում:
2022 թվականի 2-րդ կիսամյակում Բանկի կապիտալի համարժեքության նորմատիվը կազմել է 27.5% (պահանջվող նվազագույն մեծությունը 12% է), իսկ ընդհանուր և ընթացիկ իրացվելիության նորմատիվները՝ համապատասխանաբար 46.7% և 86.6% (պահանջվող նվազագույն մեծությունները համապատասխանաբար 15% և 60% են):

### Կապիտալի համարժեքության նորմատիվ Ն1(2)




### Ընդհանուր իրացվելիության նորմատիվ Ն2(1)




### Ընթացիկ իրացվելիության նորմատիվ Ն2(2)




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ, IDBank

# Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

## Վարկային ռիսկի կառավարում

Վարկավորման գործընթացում առաջացող ռիսկերի զսպման նպատակով Բանկը վարկավորման գործընթացի հիմքում դնում է հետևյալ սկզբունքները՝

- ✓ վարկի նպատակայնության և մարման աղբյուրների առկայությունը
- ✓ գրավի առարկան և գրավի առարկայի զգայունությունը տնտեսական և շուկայական զարգացումների նկատմամբ, ինչպես նաև վարկ/գրավ հարաբերակցության սահմանաչափերին համապատասխանությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործունեության տնտեսական ոլորտի առկա իրավիճակը, այդ ոլորտում դիմորդի գործունեություն ծավալելու ուղղությամբ փորձառությունը, ոլորտում նրա դիրքը, ոլորտի մրցակցության աստիճանը և մրցակցությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի գործող բիզնեսի, զուտ համախառն եկամտի կայուն մակարդակի և/կամ դրական վարկային պատմության առկայությունը
- ✓ պոտենցիալ վարկառուի ֆինանսական վիճակը բնութագրող ցուցանիշների սահմանաչափերի սահմանումը

Վարկային ռիսկի կառավարումն իրականացվում է նաև վարկային ռիսկի ախորժակի սահմանմամբ և Բանկի ընդհանուր պորտֆելի ռիսկայնության գնահատմամբ:

Բանկը գտնվում է վարկային ռիսկերի կառավարման շարունակական զարգացման և արդիական մեթոդների ներդրման գործընթացում, մասնավորապես՝ Բանկում ներդրվում են վարկային ռիսկի կառավարման նոր արդիական մոտեցումներ և հաշվողական մոդելներ, մանրածախ վարկավորման գործընթացի սքորինգային համակարգեր, հաճախորդների ռիսկայնության մակարդակների վրա հիմնված վարկերի գնագոյացման համակարգ (Advanced Risk-Based Pricing (RBP) model):

## Իրացվելիության ռիսկի կառավարում

Իրացվելիության ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը օրական կտրվածքով հաշվարկվում է իրացվելիության հիմնական տնտեսական նորմատիվները, որոնց հիման վրա կայացվում են համապատասխան որոշումներ: Բանկը իրացվելիության ռիսկի կառավարումն իրականացնում է հետևյալ հիմնական մոդելների միջոցով՝

- ✓ Իրացվելիության ճեղքվածքի (GAP) մոդել
- ✓ Իրացվելիության նորմատիվների վերլուծություն
- ✓ Սթրես-թեստավորում

## Տոկոսադրույքի ռիսկի կառավարում

Տոկոսադրույքի ռիսկի գնահատման և սահմանափակման համար Բանկը, հաշվի առնելով շուկայում առկա տոկոսադրույքները, կատարում է տոկոսադրույքների գնահատում և համապատասխանեցնում շուկայում գործող ցուցանիշներին, մշտապես վերահսկում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների և պարտավորությունների միջև առկա ժամկետայնության ճեղքվածքը, իսկ շուկայական տոկոսադրույքների փոփոխության դեպքում արագ արձագանքելով, նվազագույնի է հասցվում փոփոխության արդյունքում Բանկի համար հնարավոր կորուստների ռիսկը:

## Արտարժութային ռիսկի կառավարում

Արտարժութային ռիսկի կառավարման հիմնական սկզբունքն է նպաստել Բանկի արտարժութային բաց դիրքերի արդյունավետ կառավարման գործընթացին՝ միաժամանակ հետևելով սահմանված արտարժութային ռիսկի կառավարման նորմատիվային և ուղենիշային ցուցանիշների սահմանաչափերի պահպանմանը:

## Գործառնական ռիսկի կառավարում

Գործառնական ռիսկերի հայտնաբերման և դասակարգման համար Բանկն իրականացնում է ռիսկերի ինքնագնահատում, տեղի ունեցած գործառնական պատահարների վերաբերյալ տվյալների բազայի հավաքագրում և խաբեության ռիսկի հայտնաբերում («Կատարված, փոփոխված և հեռացված գործարքների», FPD/SPD/TPD տվյալների մասին հաշվետվությունների և Բանկում իրականացված գործաքների մշտադիտարկման միջոցով):

Մինչ նոր պրոդուկտների, նոր և վերանայվող ներքին իրավական ակտերի, բանկային գործառնությունների, գործողությունների և համակարգերի ներդրումը, Բանկը ԳՌ տեսանկյունից պոտենցիալ ռիսկերի բացահայտման նպատակով, ապահովում է վերջիններիս ուսումնասիրությունը և սահմանում է գործընթացների քայլային հաջորդականությունների ռիսկի հակվածության աստիճանները:

## Երկրի ռիսկի կառավարում

Այլ երկրներում գրանցված և/կամ փաստացի գործունեություն իրականացնող կազմակերպությունների հետ ակտիվային գործարքների կնքման, թղթակցային հաշիվների բացման և հետհաշվեկշռային պայմանական պարտավորությունների ստանձնման դեպքերում, տվյալ երկրի հետ առաջին անգամ գործարքի կնքման պահին, ինչպես նաև հետագայում Բանկը գնահատում է տվյալ կազմակերպության երկրի ռիսկը՝ հիմք ընդունելով միջազգային ռեյտինգային ընկերություններից մեկի (Moody's, Standard&Poor's, Fitch) կողմից տվյալ երկրին շնորհված վարկանիշը և ներքին ընթացակարգով սահմանված սահմանաչափերը:

# Ռիսկերի կառավարման հիմնական մոտեցումները

## Համբավի ռիսկի կառավարում

Կառավարման նպատակն է բացահայտել «ԱյԴի Բանկ» ՓԲԸ բնականոն գործունեության ընթացքում բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքի առաջացման ուղղությունները և սահմանել Բանկի կողմից համբավի ռիսկի կանխարգելմանը/նվազեցմանն ուղղված միջոցառումների հիմնական ուղղությունները:

## Ռազմավարական ռիսկի կառավարում

Ռազմավարական ռիսկի կառավարման հիմնական նպատակն է անհամապատասխան Բիզնես մոդելի որդեգրման արդյունքում առաջացող կամ հնարավոր կորուստները նվազագույնի հասցնելը: Ռազմավարական ռիսկի առաջացման հնարավորությունը բացահայտելու և գնահատելու նպատակով Բանկը ներդնում է չափանիշներ, որոնց կարգավիճակի և մեծության փոփոխությունը նշանակում է Բանկի գործունեության որոշակի ուղղության բնույթի փոփոխություն, և հետևաբար, որակապես այլ բնույթի ռազմավարական ռիսկ կրելու հնարավորություն:

**Թվարկված ռիսկերի գծով Բանկում գործող նորմատիվային դաշտը կարգավորվում է IDBank-ի ներքին և ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հաստատված համապատասխան իրավական ակտերով:**

**31/12/2022թ դրությամբ նորմատիվների գծով խախտումներ առկա չեն:**

# 4

# Ֆինանսական հաշվետվություններ


| | |
|---|---|
| Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ | **33** |
| Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն | **34** |
| Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն | **34** |
| Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն | **35** |
| Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն | **35** |

# Անկախ աուդիտորական եզրակացություն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ

## «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի Բաժնետերերին և Խորհրդին

### Կարծիք

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2022թ., այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները և համապատասխան ծանոթագրությունը, պատրաստվել են «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (Բանկ) 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա:

Մեր կարծիքով, կից ներկայացվող ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով:

### Ամփոփ ֆինանսական հաշվետվություններ

Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ ստանդարտներով պահանջվող բոլոր բացահայտումները: Հետևաբար, ամփոփ ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցումը չի փոխարինում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացության ընթերցմանը:

### Աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները և վերջիններիս վերաբերյալ մեր եզրակացությունը

Մենք արտահայտել ենք չձևափոխված կարծիք աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ՝ 2023թ. ապրիլի 18-ի մեր աուդիտորական եզրակացությունում: Եզրակացությունում ներկայացված են նաև աուդիտի առանցքային հարցերը: Աուդիտի առանցքային հարցեր են հանդիսանում այն հարցերը, որոնք ըստ մեր մասնագիտական դատողության, առավել նշանակալի էին հաշվետու ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում:

### Ղեկավարության պատասխանատվությունն ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է Ծանոթագրություն 1-ում ներկայացված հիմունքներով ամփոփ ֆինանսական հաշվետվությունների համար:

### Աուդիտորի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է արտահայտել կարծիք, թե արդյոք ամփոփ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով համապատասխանում են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին՝ հիմք ընդունելով Աուդիտի միջազգային ստանդարտ 810 (վերանայված) *«Ամփոփ ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտորական եզրակացության նկատմամբ կիրառվող առաջադրանքներ»* համաձայն իրականացված մեր ընթացակարգերը:

Իրինա Գևորգյան
Ղեկավար գործընկեր, «Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ-ի տնօրեն

«Քեյ-Փի-Էմ-Ջի Արմենիա» ՍՊԸ
18 ապրիլի 2023թ.

# 1 Պատրաստման հիմունքներ

Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են «ԱյԴի Բանկ» ՓԲԸ-ի (Բանկ) Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն պատրաստված 2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա՝ ստորագրված 2023թ. ապրիլի 18-ին: Այս ամփոփ ֆինանսական հաշվետվությունները ներառում են միայն ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվությունն առ 31-ի դեկտեմբերի 2022թ. և հաշվետու տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին ամփոփ հաշվետվությունները, որոնք վերցվել են աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունների 8-ից 11-րդ էջերից՝ առանց որևէ փոփոխության: Ամփոփ ֆինանսական հաշվետվությունները չեն ներառում աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում ներկայացված բացահայտումները: Բանկի աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվությունները կարող են տրամադրվել ըստ պահանջի Բանկի գլխամասային գրասենյակից (հասցե՝ Հայաստանի Հանրապետություն, Երևան, Վարդանանց փ. 13):

## Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին ամփոփ հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | 2022թ. հազ. դրամ | 2021թ. հազ. դրամ |
|---|---|---|
| Արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով հաշվարկված տոկոսային եկամուտ | 19,919,227 | 16,029,030 |
| Տոկոսային ծախս | (6,885,962) | (6,458,414) |
| **Զուտ տոկոսային եկամուտ** | **13,033,265** | **9,570,616** |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով եկամուտ | 6,180,054 | 3,270,797 |
| Միջնորդավճարների և այլ վճարների գծով ծախս | (4,562,552) | (3,836,245) |
| **Միջնորդավճարների և այլ վճարների գծով զուտ եկամուտ/(ծախս)** | **1,617,502** | **(565,448)** |
| Զուտ օգուտ փոխարժեքային տարբերություններից | 12,908,096 | 586,709 |
| Զուտ օգուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների գծով | 1,127,937 | 881,317 |
| Զուտ իրացված (վնաս)/օգուտ ներդրումային արժեթղթերի գծով | (55,163) | 21,480 |
| Զուտ այլ գործառնական եկամուտ | 31,920 | 281,715 |
| **Գործառնական եկամուտ** | **28,663,557** | **10,776,419** |
| Ֆինանսական գործիքների արժեզրկումից զուտ կորուստներ | (1,332,312) | (1,056,890) |
| Անձնակազմի գծով ծախսեր | (6,782,363) | (4,473,086) |
| Այլ ընդհանուր վարչական ծախսեր | (3,825,080) | (3,203,554) |
| **Շահույթ մինչև շահութահարկով հարկումը** | **16,723,802** | **2,042,889** |
| Շահութահարկի գծով ծախս | (3,207,353) | (500,866) |
| **Շահույթ տարվա համար** | **13,516,449** | **1,542,023** |
| **Այլ համապարփակ (վնաս)/եկամուտ՝ առանց շահութահարկի** | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստի շարժ. | | |
| – իրական արժեքի զուտ փոփոխություն | (570,786) | (112,454) |
| – շահույթ կամ վնաս վերադասակարգված զուտ գումար | 45,234 | (17,614) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | *(525,552)* | *(130,068)* |
| **Այլ համապարփակ վնաս տարվա համար՝ առանց շահութահարկի** | **(525,552)** | **(130,068)** |
| **Ընդամենը համապարփակ եկամուտ տարվա համար** | **12,990,897** | **1,411,955** |

## Ֆինանսական վիճակի մասին ամփոփ հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

| | 2022թ. հազ. դրամ | 2021թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **ԱԿՏԻՎՆԵՐ** | | |
| Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ | 36,273,430 | 19,706,584 |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | 351,121 | 403,975 |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթեր | | |
| – Բանկի կողմից պահվող | 7,804,552 | 8,427,360 |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթեր | | |
| – Բանկի կողմից պահվող | 69,479,481 | 8,157,426 |
| – Վաճառքի և հետգնման պայմանագրերի դիմաց գրավադրված | - | 10,589,557 |
| Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ | 41,858,155 | 12,446,803 |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | 15,725,509 | 6,076,072 |
| Հաճախորդներին տրված վարկեր | 121,327,795 | 117,101,711 |
| Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ | 7,480,638 | 7,254,785 |
| Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ | 2,071,018 | 1,369,777 |
| Առգրավված ակտիվներ | 3,098,462 | 3,130,926 |
| Այլ ակտիվներ | 3,535,599 | 1,869,406 |
| **Ընդամենը ակտիվներ** | **309,005,760** | **196,534,382** |
| **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | |
| Ածանցյալ ֆինանսական պարտավորություններ | - | 8,469 |
| Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ | 39,509,998 | 27,172,892 |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | - | 13,008,429 |
| Թողարկված պարտքային արժեթղթեր | 12,895,735 | 13,337,577 |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 188,283,970 | 92,163,976 |
| Հետաձգված հարկային պարտավորություն | 342,209 | 824,479 |
| Վարձակալության գծով պարտավորություններ | 2,194,220 | 1,507,701 |
| Ընթացիկ հարկային պարտավորություններ | 2,993,571 | 173,644 |
| Այլ պարտավորություններ | 4,113,994 | 2,656,049 |
| **Ընդամենը պարտավորություններ** | **250,333,697** | **150,853,216** |
| **ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ** | | |
| Բաժնետիրական կապիտալ | 33,971,850 | 33,971,850 |
| Էմիսիոն եկամուտ | 5,014,099 | 5,014,099 |
| Շենքերի վերագնահատումից աճ | 96,917 | 105,601 |
| Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ | (270,524) | 255,028 |
| Չբաշխված շահույթ | 19,859,721 | 6,334,588 |
| **Ընդամենը սեփական կապիտալ** | **58,672,063** | **45,681,166** |
| **Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ** | **309,005,760** | **196,534,382** |

## Դրամական միջոցների հոսքերի մասին ամփոփ հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| | 2022թ. հազ. դրամ | 2021թ. հազ. դրամ |
|---|---|---|
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Ստացված տոկոսներ | 18,928,749 | 15,838,658 |
| Վճարված տոկոսներ | (6,626,890) | (6,203,925) |
| Ստացված միջնորդավճարներ և այլ վճարներ | 6,180,054 | 3,270,797 |
| Վճարված միջնորդավճարներ և այլ վճարներ | (4,562,552) | (3,641,172) |
| Զուտ վճարումներ շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների գծով | 1,127,937 | 878,135 |
| Զուտ մուտքեր արտարժույթով գործառնություններից | 14,620,190 | 1,409,061 |
| Այլ ստացված եկամուտ | 109,725 | 86,672 |
| Անձնակազմի գծով ծախսերի և այլ ընդհանուր վարչական ծախսերի գծով վճարումներ | (8,149,279) | (6,019,813) |
| | | |
| **Գործառնական ակտիվների (աճ)/նվազում** | | |
| Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ | (166,950) | (494,383) |
| Հակադարձ հետգնման պայմանագրերի գծով ստացվելիք գումարներ | (9,674,887) | (37,985) |
| Բանկերին և այլ ֆինանսական կազմակերպություններին տրված վարկեր և փոխատվություններ | (32,395,706) | 4,409,927 |
| Հաճախորդներին տրված վարկեր | (13,462,160) | (28,032,134) |
| Այլ ակտիվներ | (1,039,797) | (281,753) |
| | | |
| **Գործառնական պարտավորությունների աճ/(նվազում)** | | |
| Բանկերի և այլ ֆինանսական կազմակերպությունների ավանդներ և մնացորդներ | 7,998,218 | (6,042,932) |
| Հետգնման պայմանագրերի գծով վճարվելիք գումարներ | (13,011,495) | (7,562,708) |
| Հաճախորդների ընթացիկ հաշիվներ և ավանդներ | 110,430,378 | 28,764,233 |
| Այլ պարտավորություններ | 520,878 | 511,312 |
| **Գործառնական գործունեությունից ստացված/ գործառնական գործունեության համար (օգտագործված) զուտ դրամական միջոցներ՝ մինչև շահութահարկի վճարումը** | **70,826,413** | **(3,148,010)** |
| Վճարված շահութահարկ | (754,331) | (1,147,116) |
| **Գործառնական գործունեությունից ստացված/գործառնական գործունեության համար (օգտագործված) դրամական հոսքեր** | **70,072,082** | **(4,295,126)** |
| | | |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռքբերում | (1,757,047) | (921,223) |
| Ամորտիզացված արժեքով չափվող ներդրումային արժեթղթերի ձեռք բերում | (52,545,477) | (98,954) |
| Մուտքեր իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ներդրումային արժեթղթերի վաճառքից և մարումից | 982,664 | 2,283,194 |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների ձեռքբերում | (1,470,706) | (1,461,818) |
| Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների վաճառք | 139,333 | - |
| **Ներդրումային գործունեության համար օգտագործված դրամական հոսքեր** | **(54,651,233)** | **(198,801)** |
| | | |
| **ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ** | | |
| Մուտքեր պարտքային արժեթղթերի թողարկումից | 8,769,181 | 6,038,359 |
| Թողարկված պարտքային արժեթղթերի մարում | (6,646,600) | (5,042,750) |
| Մուտքեր ներգրավված միջոցներից | 7,962,796 | 7,971,288 |
| Ներգրավված միջոցների մարում | (1,966,894) | (883,011) |
| Վարձակալության գծով պարտավորությունների մարում | (214,376) | (265,235) |
| **Ֆինանսավորման գործունեությունից ստացված դրամական հոսքեր** | **7,904,107** | **7,818,651** |
| | | |
| **Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ աճ** | **23,324,956** | **3,324,724** |
| Փոխանակման փոխարժեքի փոփոխության ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | (6,760,161) | (838,733) |
| Ակնկալվող պարտքային կորուստների փոփոխությունների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա | 2,051 | 2,978 |
| Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբի դրությամբ | 19,706,584 | 17,217,615 |
| **Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջի դրությամբ** | **36,273,430** | **19,706,584** |

## Սեփական կապիտալում փոփոխությունների մասին ամփոփ հաշվետվություն

2022թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար

| հազ. դրամ | Բաժնետիրական կապիտալ | Էմիսիոն եկամուտ | Շենքերի վերագնահատումից աճ | Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի փոփոխության գծով պահուստ | Չբաշխված շահույթ | Ընդամենը սեփական կապիտալ |
|---|---|---|---|---|---|---|
| Մնացորդը առ 1 հունվարի 2021թ. | 33,971,850 | 5,014,099 | 105,601 | 385,096 | 4,792,565 | 44,269,211 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | - | - | 1,542,023 | 1,542,023 |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | | |
| – Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | (112,454) | - | (112,454) |
| – Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | (17,614) | - | (17,614) |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | - | - | - | *(130,068)* | - | *(130,068)* |
| **Ընդամենը այլ համապարփակ վնաս** | - | - | - | **(130,068)** | - | **(130,068)** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | - | **(130,068)** | **1,542,023** | **1,411,955** |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **33,971,850** | **5,014,099** | **105,601** | **255,028** | **6,334,588** | **45,681,166** |
| | | | | | | |
| Մնացորդը առ 1 հունվարի 2022թ. | 33,971,850 | 5,014,099 | 105,601 | 255,028 | 6,334,588 | 45,681,166 |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք** | | | | | | |
| Շահույթ տարվա համար | - | - | - | - | 13,516,449 | 13,516,449 |
| **Այլ համապարփակ վնաս** | | | | | | |
| *Հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | | | | | | |
| – Ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | (570,786) | - | (570,786) |
| – Շահույթ կամ վնաս տեղափոխված ներդրումային արժեթղթերի իրական արժեքի զուտ փոփոխություն՝ առանց հետաձգված հարկի | - | - | - | 45,234 | - | 45,234 |
| *Ընդամենը հոդվածներ, որոնք վերադասակարգված են կամ կարող են հետագայում վերադասակարգվել որպես շահույթ կամ վնաս* | - | - | - | *(525,552)* | - | *(525,552)* |
| **Ընդամենը այլ համապարփակ վնաս** | - | - | - | **(525,552)** | - | **(525,552)** |
| **Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար** | - | - | - | **(525,552)** | **13,516,449** | **12,990,897** |
| Տեղափոխում վերագնահատումից աճից չբաշխված շահույթ | - | - | (8,684) | - | 8,684 | - |
| **Մնացորդը առ 31 դեկտեմբերի 2021թ.** | **33,971,850** | **5,014,099** | **96,917** | **(270,524)** | **19,859,721** | **58,672,063** |

# ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԱՆՁԱՆՑ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Սույնով հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն՝

1. Ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են ԱյԴի Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների տարեկան զեկույցը ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում է Բանկի ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ռիսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Բանկը:

2. 2022 թվականի աուդիտ անցած ֆինանսական հաշվետվությունները կազմված են ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և, բոլոր էական առումներով, ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Բանկի ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը 2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ:

| | |
|---|---|
| **Մհեր Աբրահամյան** | Վարչության նախագահ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| **Արման Ասատրյան** | Ֆինանսական տնօրեն,<br>Վարչության անդամ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| **Կարեն Նալբանդյան** | Բիզնեսի զարգացման տնօրեն,<br>Վարչության անդամ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| **Ռաֆիկ Սուվարյան** | Ռիսկերի կառավարման գծով տնօրեն,<br>Վարչության անդամ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| **Անուշիկ Խաչատրյան** | Գլխավոր հաշվապահ,<br>Վարչության անդամ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| **Սերգեյ Առաքելյան** | Թվային բանկինգի տնօրեն,<br>Վարչության անդամ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |
| **Տիգրան Մխիթարյան** | Կորպորատիվ բիզնեսի գծով տնօրեն<br>Վարչության անդամ |
| (անուն, ազգանուն) | (պաշտոն) |